Մահտեսի Յարութիւն Մահտեսի Ղուկասեան։

Մահտեսի Մարտիրոս Պաղտասարեան։

Յամի Տեառն 1823, և Հայոց ՌՄՀԲ, 'ի 11 Օգոստոսի, յԱրքայապերճն Կոստանդինուպոլիս։

Իսկ Յարութիւն վարդապետ Եղեսիոյ, որ 'ի սմին ժամանակի վարէր զպաշտօն Փոխանորդութեան Աթոռոյն Երուսաղէմի 'ի Կոստանդինուպոլիս, առաքեաց զհրովարտակն 'ի ձեռն Կարապետի ուրուք, որոյ զրաղում դրամս առեալէր 'ի ճանապարհի պարտեօք յանուն Երուսաղէմի, և յաւուրսն յայնոսիկ Քաղաքապետն Երուսաղէմի պահանջէր 1500 դահեկան նորասահման տուրս վասն պարարտելոյ ծուխս Կուսակալին. Հայք ընդդէմ կացեալ ոչ ետուն, և առաքեցին զհրովարտակն հանդերձ աղերսագրով և այլ յանձնարարական թղթովք առ Կուսակալն 'ի ձեռն Յակոբ վարդապետի, զի առցէ զիր 'ի նմանէ ըստ մտաց հրովարտակին, չպահանջել ինչ այլազգեաց առաւել քան ըստ սահմանեալն։

ԳԼՈՒԽ ԽԴ.

Հրաժարական Պաղոսի։ Ընտրութիւն Կարապետի 'ի Պատրիարք։ Կանոնական բանք նորին։ Բռնութիւն Քաղաքապետին։ Ապտուլլահ Փաշայ Աքքէի։ Գնալ Գաբրիել Պատրիարքի 'ի Կոստանդինուպոլիս հրամանաւ ազգին և Տէրութեան։

ՊՕՂՈՍ Պատրիարք Կոստանդինուպոլսոյ գումարեաց ազգային ժողով մեծ 'ի Պատրիարքարանն (1823. 'ի 18 Հոկտեմբերի). եւ առաջի ամենեցուն ինքնակամ յօժարութեամբ հրաժարեցաւ 'ի պաշտօնէ Պատրիարքութեան, պատճառելով զտկարութիւն անձին իւրոյ. թէպէտ եւ Ամիրայք յորդորեցին զնա չթողուլ զայն պաշտօն, այլ նա մատոյց նոցա զդիր հրաժարման իւրոյ և նոքա յանձն արարին նմա ծանուցանել զխնդիրն մեծի վէզիրին։ Եւ 'ի վաղիւ անդ յղեաց զհրաժարականն 'ի Դուռն, եւ Նախարարք մատուցին զայն Արքայի, և նա դարձոյց վերստին